ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
<<ՌՈԲԵՐՏ ԱԲԱՋՅԱՆԻ ԱՆՎԱՆ
N 147 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ

ՀՀ. 0037, ք. Երևան, Կարապետ Ուլնեցու 1, հեռ.՝ (+374 10)24-50-20 *Էլ.փոստ՝ school147@schools.am*

№ 01/ 406

«09» սեպտեմբերի 2022 թ.

ՀՀ ԿԳՄՍ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԳԱԳԻԿ ՍԱՖԱՐՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Սաֆարյան,

Հայտնում ենք Ձեզ, որ <<Երևանի Ռ. Աբաջյանի անվան հ.147 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ում առաջացել է <<Քիմիա>>, <<Հայոց լեզու և գրականություն>> առարկաների ուսուցչի թափուր տեղ:

Կից ներկայացնում ենք թափուր տեղի համար տրված հայտարարությունը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ՄԱՐԳԱՐԻՏԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Դպրոց
Կատ.՝ Հ. Գյուլումյան
հեռ.՝ 010-245020

Մրցույթ՝ «Երևանի Ռ. **Աբաջյանի** անվան հ. 147 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի Քիմիա (8 դասաժամ), Հայոց լեզու և գրականություն (7 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սեպտեմբերի 1-ից մինչև սեպտեմբերի 14 -ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2022 թ. սեպտեմբերի **22-** ին՝ ժամը 14:00-ին, Երևանի Ռ. **Աբաջյանի** անվան հ. 147 հիմնական դպրոցում, հասցե՝ ք. Երևան, Քանաքեռ-Զեյթուն, Կ. **Ուլնեցի 1**: Տեղեկությունների համար զանգահարել 010245020 հեռախոսահամարով: